ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարան ներկայացուցիչ՝ Ա. Համբարձումյանի
«Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի և ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-9»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3503-2021 գրությամբ «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.03.2021թ.-ի թիվ 01/61-4567 գրության հիման վրա, 12.03.2021թ.-ին «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 12.03.2021թ.-ին:

12.03.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/68 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

18.03.2021թ.-ին, 26.03.2021թ.-ին և 09.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.04.2021թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 03.03.2021թ.-ի թիվ 01/61-4567 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ 21/1» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «ՄՄՄ ՖՕՕԴ» ՍՊԸ-ն, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ն, Հմայակ Վարդանյան Գեղեցիկի Ա/Ձ-ն (այսուհետ՝ Մասնակիցներ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցները որոշ չափաբաժինների մասով ճանաչվել են ընտրված մասնակիցներ:

Երևանի քաղաքապետարանի և Մասնակիցների միջև կնքվել են համապատասխան գնման պայմանագրեր՝ առանց ֆինանսական միջոցների:

Պայմանագրերի 8.15 կետի համաձայն՝ «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի Մայիսի 4 ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»

Մասնակիցներին պատշաճ ձևով՝ իրենց կողմից ներկայացված գնման հայտի թիվ 1 հավելվածում նշված էլեկտրոնային հասցեներին, որոնք նշված են նաև armeps.am համակարգում, ներկայացվել են համաձայնագրևր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկներ, սակայն «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ի, Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել նշված փաստաթղթերը, իսկ «ՄՄՄ ՖՕՕԴ» ՄՊԸ-ի կողմից ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները: Վերոգրյալով պայմանավորված՝ մասնակիցները զրկվել են համաձայնագրեր կնքելու իրավունքից:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Մասնակիցների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 22.03.2021թ.-ի թիվ 02/61-6168 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր կողմից ներկայացված ՍՅ-ԼՕ-2021/68 և ՍՅ-ԼՕ-2021/69 ծածկագրերով ընթացակարգի շրջանակներում մասնակիցների դիրքորոշումների վերաբերյալ տրամադրվում է հետևյալ կարծիքը.

- ՍՅ-ԼՕ-2021/68 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հմայակ Վարդանյան Գեղեցիկի Ա/Ձ-ի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1 ծածկագրով ընթացակարգը հայտարարել է ղեկավարվելով գնումների մասին օրենսդրության պահանջներով, որը չի հակասել ներկայացված դիրքորոշման 2-րդ կետի 2.1 ենթակետով նշված փաստարկներին:

- ՍՅ-ԼՕ-2021/69 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լեբրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ տեղեկացնում եմ, Ընկերությանը համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ է ներկայացվել համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12) ենթակետի պահանջների: Ծանուցումն ուղարկվել է Ընկերության կողմից գնման հայտի թիվ 1 հավելվածում նշված էլեկտրոնային հասցեին, որը նշված է նաև armeps.am համակարգում առկա մասնակցի տվյալներում: Նշեմ նաև, որ ընթացակարգի քարտուղարի կողմից բազմիցս հեռախոսազանգերի միջոցով Ընկերության աշխատակիցներին տեղեկացվել է համաձայնագիրը ներկայացնելու վերջնաժամկետների մասին, ինչին ի պատասխան Ընկերության աշխատակիցները և ներկայացուցիչը նշել են, որ հնարավոր է երաշխիքները ներկայացվեն ուշացումով:

Հետևաբար, Ընկերության այն պնդումը, որ չի ստացել համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը, անհիմն է և նպատակաուղղված է օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներից խուսափելուն:»:

3. <u>«Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.03.2021 թ.-ի թիվ 26/26-1/3503-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Երևանի քաղաքապետարանի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հմայակ Վարդանյան Գեղեցիկի Ա/Ձ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2021/68 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 03.03.2021թ.-ի թիվ 01/61-4567 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ առարկում ենք դրանց դեմ:

1.1. 2020 թվականի հոկտեմբերի 06-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետև նաև՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով Պատվիրատուն բաց մրցույթի ընթացակարգով հայտարարել է թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

1.2. Մրցույթի արդյունքում Մասնակիցը 25-րդ չափաբաժնի՝ «Խտացրած կաթ», մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից: 30.12.2020 թվականին Պատվիրտուի և Մասնակցի միջև կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-9» ծածկագրով պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմում է 32.019.750 (երեսուներկու միլիոն տասնինը հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

1.3. www.armeps.am համակարգի միջոցով Պատվիրատուն չի ուղարկել Մասնակցին համաձայնագիր կնքելու և Պայմանագրի կատարման ապահովումները ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը:

1.4. Մրցույթի հրավերի 10.1, 10.2 և 10.3 կետերի համաձայն՝ ընտրված (հաղթող) մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է «Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները (այսուհետև միասին նաև՝ Ապահովումներ): Ապահովումները հանդիսանում են

պայմանագրի կատարման ապահովումներ, իսկ գումարային՝ տոկոսային արտահայտությամբ կազմում են Մարցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրի գնի 110 տոկոսը, քանի որ Հրավերի 10.1, 10.2 և 10.3 կետերի համաձայն՝ որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին իսկ պայմանագրի ապահովման չափը կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսին:

1.5. Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ «8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: (...): Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»

2.1. Մրցույթի հայտարարության 1-ին պարբերության հաաձայն. «Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը, (...), հայտարարում է բաց մրցույթ, որն իրականացվում է (...)՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Իսկ Մրցույթի հրավերի 1-ին մասի 8.18 կետի համաձայն՝ պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով:

ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի թիվ 386-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգ»-ի 8-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային գնումը ներառում է էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգի իրականացումը և ծանուցումների տրամադրումը:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների

փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոգրյալից հետևում է, որ Պայմանագրի 8.15 կետով սահմանված համաձայնագիրը կնքելու վերաբերյալ Մասնակցին պատշաճ ծանուցելու համար, անհրաժեշտ է այդ ծանուցումը Մասնակցին ուղարկել armeps.am համակարգի միջոցով: Հետևաբար, եթե ծանուցումը չի ուղարկվել armeps.am համակարգի միջոցով, ապա Մասնակիցը այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում Պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ:

Այսպիսով, սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Պայմանագրի 8.15 կետով սահմանված Պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և համաձայնագիրը կնքելու վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուն ուղարկել է Մասնակցին ոչ թե armeps.am համակարգի միջոցով, այլ ինչ-որ էլեկտրոնային փոստի հասցեից, ուստի կարելի է փաստել, որ այդ հանգամանքի վերաբերյալ Մասնակիցը պատշաճ չի ծանուցվել: Հետևաբար, այդ ծանուցման հիմքով՝ Պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ:

2.2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»:

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը վավերացվել է ՀՀ ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԱԺՈ-132-Ն որոշմամբ:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 25-րդ հավելվածի «Գնումների ոլորտին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն. «18. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել հնարավոր մատակարարներին և մատակարարներին ներկայացվող պահանջներ՝ (...) գնման պայմանագրերի կատարման ապահովման վերաբերյալ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը և ձևերը, ինչպես նաև գնումների պայմանագրի կատարման ապահովումը: Ընդ որում, գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի 5 տոկոսը, իսկ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը՝ գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը, (…):»:

Հրավերի 10.2 կետի համաձայն. «10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին: Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

(…)

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ պայմանագրի կատարումը փուլային է (…), ապա յուրաքանչյուր փուլի արդյունքը գնորդի կողմից ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ գումարի չափով:

Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է հավելված 4.1-ի համաձայն:

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:»:

Հրավերի 10.3 կետի համաձայն. «10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:

(…):

(…) Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:(…):»:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ «8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: (...): Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: (...):»

Հրավերով սահմանված պահանջներից հետևում է, որ գնման ընթացակարգին մասնակցած և այդ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու իրավունք ձեռքբերած մասնակիցը, պայմանագիրը կնքելու համար պատվիրատուին է ներկայացնում «Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները: Եթե մասնակիցը այդ ապահովումները չի ներկայացնում, ապա վերջինս զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները հանդիսանում են պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ապահովումներ, և այդ Ապահովումների ընդհանուրի չափը կազմում է պայմանագրի գնի 110% (հարյուր տաս տոկոսը): Ընդորում, Պայմանագրի համաձայն՝ «Որակավորման ապահովումը» և «Պայմանագրի ապահովումը» Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, եթե նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է 10մլն. ՀՀ դրամը:

Նշյալից հետևում է, որ հրավերով և Պայմանագրով սահմանված դրույթները հակասում են ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերին, քանի որ ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերի համաձայն՝ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 % (երեսուն տոկոսը): Մինչդեռ հրավերով և Պայմանագրով Մասնակցից պահանջվում է պայմանագրի կատարման ապահովումները ներկայացնել պայմանագրի գնի 110 % (հարյուր տաս տոկոսի) չափով:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարծում ենք, որ հրավերում, այդ թվում՝ Պայմանագրում հարկավոր էր կիրառել ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված դրույթները և Ապահովումների չափը նախատեսել այնպես, որ դրանք չգերազանց էին տվյալ Գնման առարկայի առավելագույն գնի (կանխատեսված ֆինանսական միջոցների) 30% (երեսուն տոկոսը): Քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»:

Վերոնշվածից հետևում է, որ հրավերի 10.2 և 10.3 կետերի և Պայմանագրի 8.15 կետի դրույթները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերին այնքանով, որքանով այդ կետերով սահմանված Ապահովումների չափը գերազանցում է Մրցույթի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկայի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը:

Ուստի, կարծում ենք, որ Պատասխանողը խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի և ԵԱՏՄ մասին պայմանագրի 25-րդ հավելվածի 2-րդ մասի 18-րդ կետի նորմերը:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է եզրահանգել, որ Պատվիրատուն իրավունք չուներ Մասնակցից պահանջել 110% տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովումներ իսկ Մասնակցի կողմից այդ ապահովումները չներկայացնելը և որպես հետևանք համաձայնագիր չկնքելը ունեն իրավական հիմք:

Ավելին՝ ապահովումները պահանջվել են բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, նման ձևով ապահովումներ ներկայացնելը Մասնակցին անհարկի ծանրաբեռնում է բավականին մեծ ֆինանսական պարտավորություններով: Այսպիսով, կարծում ենք, որ համաձայնագիրը չկնքելու մեջ Մասնակցի մեղավորությունը բացակայում է: Քանի որ տվյալ պարագայում Պատվիրատուն է, որ խախտելով ՀՀ Սահմանադրության և ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերը թե հրավերով, և թե Պայմանագրով՝ ձեռքբերման ենթակա գնման առարկայի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 փոխարեն պայմանագրի կատարման համար սահմանել է պայմանագրի գնի 110 տոկոսի չափով ապահովում՝ բանկային երաշխիքի և կանխիկ փողի ձևով:

Բացի այդ, ինչպես պարզեցինք սույն դիրքորոշման 2.1. կետով, Մասնակիցը պատշաճ չի ծանուցվել՝ Պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և համաձայնագիրը կնքելու վերաբերյալ:»:

Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2021/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.12.2020թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ն:

v. Երևանի քաղաքապետարանի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի միջև 30.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-9» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

vi. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

vii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ.-ի դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

viii. Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ix. Հանձնաժողովի քարտուղարի՝ ani.hambardzumyan@yerevan.am էլ. հասցեից Մասնակցի seroj5565@mail.ru էլ. հասցեին է ուղարկվել համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու մասին ծանուցում:

x. Երևանի քաղաքապետարանի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

xi. www.gnumner.am համացանցային կայքում 02.03.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 01.03.2021թ.-ի թիվ 01/61-4386 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի միջև 30.12.2020 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-9» ծածկագրով գնման պայմանագիր, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է

պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով: Համաձայն պայմանագրի 8.15 կետի՝ «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»:

Հաշվի առնելով, որ Մասնակցին պատշաճ ձևով ներկայացվել է համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով, հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

xii. Բողոքներ քննող անձը 29.03.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/6716-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ից մինչև 05.02.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով գնման ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվե՞լ են ծանուցումներ, թե՝ ոչ, և եթե ծանուցումն ուղարկվել է, ապա Մասնակիցների կողմից ծանուցումները ստացվել ե՞ն, թե՝ ոչ:

xiii. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.03.2021թ.-ին թիվ Ն/26-1/6756-2021 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների

համակարգում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից գրությամբ նշված ժամկետներում ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.03.2021 թ.-ի թիվ 26/26-1/3503-2021 գրությամբ «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու

ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը հայտարարել է բաց մրցույթ, որն

իրականացվելու է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հրավերի 8.18-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի 25-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ն, ինչի արդյունքում Երևանի քաղաքապետարանի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի միջև 30.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-9» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Հանձնաժողովի քարտուղարի՝ ani.hambardzumyan@yerevan.am էլ. հասցեից Մասնակցի seroj5565@mail.ru էլ. հասցեին է ուղարկվել համաձայնագիր կնքելու,

որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու մասին ծանուցում:

Երևանի քաղաքապետարանի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.gnumner.am համացանցային կայքում 02.03.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 01.03.2021թ.-ի թիվ 01/61-4386 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ի միջև 30.12.2020 թվականին կնքվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1-9» ծածկագրով գնման պայմանագիր, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով: Համաձայն պայմանագրի 8.15 կետի՝ «ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»:

Հաշվի առնելով, որ Մասնակցին պատշաճ ձևով ներկայացվել է համաձայնագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով, հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Բողոքներ քննող անձը 29.03.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/6716-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ից մինչև 05.02.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով գնման ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվե՞լ են ծանուցումներ, թե՝ ոչ, և եթե ծանուցումն ուղարկվել է, ապա Մասնակիցների կողմից ծանուցումները ստացվել ե՞ն, թե՝ ոչ: Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.03.2021թ.-ին թիվ Ն/26-1/6756-2021 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից գրությամբ նշված ժամկետներում ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հրավերի 8.18-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են, որ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընդ որում՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցում ուղարկել նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի

պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին համաձայնագիր կնքելու նպատակով որևէ ծանուցում չի ուղարկվել, այլ ուղարկվել է քարտուղարի՝ ani.hambardzumyan@yerevan.am էլ. հասցեից, ինչը չի բխել Հրավերի 8.18-րդ կետի դրույթներից, քանի որ Երևանի քաղաքապետարանը հայտարարել է բաց մրցույթ՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, ըստ այդմ՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումները պետք է ուղարկվեն համակարգի (armeps.am՝ ոչ ավտոմատ ծանուցում) միջոցով, այլ ոչ թե քարտուղարի էլ. հասցեով: Ընդ որում, ՀՀ ֆինանսների

նախարարությունը 29.03.2021թ.-ին թիվ Ն/26-1/6756-2021 գրությամբ հավաստել է, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ից մինչև 05.02.2021թ.-ը ընկած ժամանակահատվածում ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղերձ նամակներ չեն ուղարկվել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պայմանագրի 8.15 կետով սահմանված համաձայնագիրը կնքելու վերաբերյալ Մասնակցին պատշաճ ծանուցելու համար, անհրաժեշտ է այդ ծանուցումը Մասնակցին ուղարկել armeps.am համակարգի միջոցով: Հետևաբար, եթե ծանուցումը չի ուղարկվել armeps.am համակարգի միջոցով, ապա Մասնակիցը այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն

տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ն ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ ուղղված համաձայնագիր կնքելուն, պայմանագրի ու որակավորման երաշխիքները ներկայացնելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (Հանձնաժողովի քարտուղարի կողմից Հրավերի 8.18-րդ կետերով սահմանված պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.03.2021 թ.-ի թիվ 26/26-1/3503-2021 գրությամբ «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/68 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**